

**ԱՄՓՈՓԱԹԵՐԹ**

«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» և «Պրոբացիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության Կ-309-26.04.2018-ՊԻՄԻ օրենքների նախագծերի վերաբերյալ ներկայացված առաջարկների

N	ԱՌԱՋԱՐԿԻ ՀԵՂԻՆԱԿԸ	ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾԸ ԿԱՄ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՄԱՍԸ	ԱՌԱՋԱՐԿԸ	ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԵՂԻՆԱԿԻ (ՀԻՄՆԱԿԱՆ ԶԵԿՈՒՑՈՂԻ) ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ	ԱՌԱՋԱՐԿՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԿԱՄ ՄԵՐԺԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄԸ
1.	ՀՀ կառավարություն	1. «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդված	1.Նախագծի 3-րդ հոդվածը խմբագրել՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ նախագծում, որպես օրենքի ուժի մեջ մտնելու ժամկետ, նախատեսվել է նորընտիր Հանրապետության նախագահի կողմից իր պաշտոնի ստանձնման օրը: Ըստ այդմ՝ խմբագրել նաև փաթեթում ներառված մյուս նախագծերի անցումային դրույթները:	1.Առաջարկությունն ամբողջովին ընդունվել է. նշված նախագծի անցումային դրույթները խմբագրվել են: Մասնավորապես՝ նշված հոդվածը շարադրվել է հետևյալ խմբագրությամբ. <b>«Հոդված 3. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ</b> 1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: 2. Պատիժը կատարող	Ընդունվել է:

				<p>հիմնարկի վարչակազմն այն դատապարտյալների վերաբերյալ, որոնց պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու իրավական հնարավորությունը ծագել է մինչև 2018 թվականի սեպտեմբերի 1-ը և չի քննարկվել պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցերով անկախ հանձնաժողովի կողմից, իրավական հնարավորության ծագման պահից 10 աշխատանքային օրվա ընթացքում, կազմում և երեք աշխատանքային օրվա ընթացքում դատապարտյալին է ներկայացնում Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 76-րդ հոդվածի 1.1-ին և 1.2-րդ մասերով նախատեսված հանգամանքների վերաբերյալ</p>	
--	--	--	--	--	--

				<p>գեկույց: Եթե դատապարտյալը տալիս է գրավոր համաձայնություն, ապա պատիժը կատարող հիմնարկի վարչակազմը դատապարտյալի գրավոր համաձայնությունն ստանալուց հետո՝ երկու աշխատանքային օրվա ընթացքում, ընդունում է դատապարտյալին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցը դատարան ներկայացնելու մասին որոշում, և երեք աշխատանքային օրվա ընթացքում որոշումը միջնորդագրով ներկայացնում դատարան:</p> <p>3. Այն դատապարտյալների, որոնց պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու իրավական հնարավորությունը ծագելու է 2018 թվականի սեպտեմբերի</p>	
--	--	--	--	--	--

				<p>1-ից հետո, պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցը քննարկվում է սույն օրենքով սահմանված կարգով:»:</p> <p>Նախագծերի փաթեթում ներառված մյուս նախագծերի անցումային դրույթները ևս խմբագրվել են հաշվի առնելով նշված նախագծերի անցումային դրույթների առանձնահատկությունները:</p>	
	<p><b>Պատգամավոր Արփիինե Հովհաննիսյան</b></p>	<p><b>1. «Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 2-րդ հոդված</b></p>	<p>2.Նախագծի 2-րդ հոդվածով խմբագրվող 115-րդ հոդվածի 2-րդ մասը խմբագրել հետևյալ հիմնավորմամբ. Նախագծով նախատեսվել է, որ դատապարտյալի գրավոր դիմումն ստանալու պահից երեք աշխատանքային օրվա ընթացքում պատիժը կատարող հիմնարկի վարչակազմն այդ մասին պաշտոնապես ծանուցում է Պրոբացիայի ծառայությանը և Քրեակատարողական ծառայության կենտրոնական</p>	<p>2.Առաջարկությունն ամբողջովին ընդունվել է. Նախագծով խմբագրվող 115-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրվել է հետևյալ խմբագրությամբ.</p> <p>«3. Դատապարտյալի գրավոր դիմումն ստանալու պահից երեք աշխատանքային օրվա ընթացքում պատիժը կատարող հիմնարկի վարչակազմն այդ մասին պաշտոնապես ծանուցում է պրոբացիայի ծառայությանը:</p>	<p>Ընդունվել է:</p>

			<p>մարմինն: Այս առումով հարկ է նշել, որ Քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմինը զեկույց կազմելու համար անհրաժեշտ փաստաթղթեր ստանալու նպատակով հետադարձ կապ է հաստատելու պատիժը կատարող հիմնարկի վարչակազմի հետ, ինչը լրացուցիչ մեծացնելու է ծառայության ներսում իրականացվող փաստաթղթաշրջանառության ծավալները: Ուստի, նախատեսել, որ դատապարտյալի գրավոր դիմումն ստանալու պահից երեք աշխատանքային օրվա ընթացքում պատիժը կատարող հիմնարկի վարչակազմն այդ մասին պաշտոնապես ծանուցում է պրոբացիայի ծառայությանը: Դատապարտյալի գրավոր դիմումն ստանալուց հետո՝ արդարադատության ոլորտում Կառավարության քաղաքականությունը մշակող նախարարի սահմանած ժամկետում և կարգով, պատիժը կատարող հիմնարկի վարչակազմն այդ մասին պաշտոնապես ծանուցում է</p>	<p>Դատապարտյալի գրավոր դիմումն ստանալուց հետո՝ արդարադատության ոլորտում Կառավարության քաղաքականությունը մշակող նախարարի սահմանած ժամկետում և կարգով, պատիժը կատարող հիմնարկի վարչակազմն այդ մասին պաշտոնապես ծանուցում է քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմինն (այսուհետ՝ քրեակատարողական ծառայություն)՝ կցելով դատապարտյալի անձնական գործի ամփոփ տեղեկանքը և անհրաժեշտ այլ փաստաթղթերը:»:</p> <p>Միաժամանակ, Նախագծով խմբագրվող 115-րդ հոդվածի 5-րդ, 6-րդ, 7-րդ և 8-րդ մասերում «լրանալու օրն» բառերը փոխարինվել են «լրանալուց հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում,» բառերով:</p>	
--	--	--	---	---	--

			<p>քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնին՝ կցելով դատապարտյալի անձնական գործի ամփոփ տեղեկանքը և անհրաժեշտ այլ փաստաթղթերը:</p> <p>Միաժամանակ, առաջարկվում է նշված հոդվածով խմբագրվող 115-րդ հոդվածի 5-րդ, 6-րդ, 7-րդ և 8-րդ մասերում «լրանալու օրն» բառերը փոխարինել «լրանալուց հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում,» բառերով՝ գործնականում հնարավոր ժամկետային խախտումներից խուսափելու նպատակով:</p>		
		<p><b>2.«Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 2-րդ հոդված</b></p>	<p>2.Նախագծի նշված հոդվածով ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 115-րդ հոդվածի 9-րդ մասի առաջարկվող խմբագրության համաձայն՝ պատիժը կատարող հիմնարկի վարչակազմը դատապարտյալին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցը դատարան ներկայացնելու կամ չներկայացնելու մասին</p>	<p>2.Առաջարկությունն ընդունվել է մասնակի: Նախագծով խմբագրվող 115-րդ հոդվածի 9-րդ մասը լրացվել է հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ. «Եթե միջնորդագրի քննության ընթացքում պարզվում է, որ դատապարտյալը սույն հոդվածի 8-րդ կետով նախատեսված դեպքում բողոքարկել է պատիժը կատարող հիմնարկի</p>	<p>Ընդունվել է:</p>

			<p>որոշման և գեկույցների պատճենները, դատապարտյալի անձնական գործի ամփոփ տեղեկանքը որոշումը կայացնելուց հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում, ուղարկում է պատժի կիրառման օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազին: Սույն հոդվածի 7-րդ և 8-րդ մասերով սահմանված կարգով կայացված որոշումն օրենսդրությանը հակասող համարելու դեպքում Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը կամ նրա տեղակալը նշված ակտը վերացնելու միջնորդագիր է ներկայացնում արդարադատության ոլորտում Կառավարության քաղաքականությունը մշակող նախարարին: Վերջինս միջնորդագրի քննության արդյունքների մասին տեղեկացնում է միջնորդագրի հեղինակին: Մինևույն ժամանակ, նույն հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ եթե քրեակատարողական</p>	<p>վարչակազմի որոշումը, արդարադատության ոլորտում Կառավարության քաղաքականությունը մշակող նախարարը միջնորդագիրը վերադարձնում է միջնորդագրի հեղինակին:»: Առաջարկվող խմբագրության պայմաններում կբացառվի դատապարտյալի բողոքի և դատախազի միջնորդագրի գուգահեռ «շրջանառության» մեջ գտնվելը: Անդրադառնալով առաջարկվող այն լուծմանը, որ դատարան բողոքարկելու հնարավորությունը պետք է նախատեսել դատախազական հսկողության կառուցակարգը սպառելուց հետո, ապա հարկ է նշել, որ նման պայմաններում անձի դատական պաշտպանության իրավունքի իրացումը պայմանավորվում և կախվածության մեջ է գտնվում դատախազական հսկողության կառուցակարգի իրացումից, ինչն արդարացված է: Միաժամանակ, հարկ է ընդգծել, որ դատախազական</p>	
--	--	--	---	--	--

			<p>ծառայության և պրոբացիայի ծառայության գեկույցները բացասական են, ապա պատիժը կատարող հիմնարկի վարչակազմը դատապարտյալի նկատմամբ նշանակված պատժի ժամկետի՝ օրենքով սահմանված մասը լրանալու օրն ընդունում է դատապարտյալին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցը դատարան չներկայացնելու մասին որոշում: Սույն մասով նախատեսված դեպքում պատիժը կատարող հիմնարկի վարչակազմը դատապարտյալին գրավոր կերպով ծանուցում է պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցը կրկին քննարկելու կարգի, ինչպես նաև պատիժը կատարող հիմնարկի վարչակազմի որոշումը բողոքարկելու իրավունքի մասին: Որոշումը կարող է բողոքարկվել առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան</p>	<p>հսկողության կառուցակարգը գործնականում նախատեսված է դատապարտյալի իրավունքի հնարավոր խախտումը բացառելու համար: Եթե առկա է դատապարտյալի բողոք, ապա դատապարտյալի իրավունքի հնարավոր խախտումը կքննարկվի արդեն դատական ընթացակարգերով:</p>	
--	--	--	--	---	--



			<p>որոշումն ստանալուց հետո՝ տասնօրյա ժամկետում: Փաստորեն, եթե կայացվում է դատապարտյալին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցը դատարան չներկայացնելու մասին որոշում, ապա այն երեք աշխատանքային օրվա ընթացքում, ուղարկում է պատժի կիրառման օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազին և միևնույն ժամանակ կարող է բողոքարկվել դատարան: փաստորեն, կարող է ստացվել մի իրավիճակ, որ գլխավոր դատախազը կամ նրա տեղակալը նշված ակտը վերացնելու միջնորդագիր է ներկայացնում արդարադատության ոլորտում Կառավարության քաղաքականությունը մշակող նախարարին, սակայն միևնույն ժամանակ նույն ակտի դեմ բողոք առկա լինի դատարանում: Կարծում ենք՝ այս իրավիճակին կամ պետք է համապատասխան</p>		
--	--	--	---	--	--

			<p>լուծում տրվի քրեական դատավարության օրենսգրքում, կամ պարզապես դատարան բողոքարկելու հնարավորություն նախատեսել դատախազական հսկողության կառուցակարգը սպառելուց հետո:</p>		
--	--	--	---	--	--